

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՑՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

02.09.2015

Մարզի համայնքներում և մարզային ենթակայությամբ գործող կազմակերպություններում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին տեղում ծանոթացելու նպատակով շարունակվում են ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանի աշխատանքային այցելությունները: Մարզի ղեկավարը եղել է Աբովյանի բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի մասնաշենքում, որտեղ Կ. Գուլոյանին ներկայացվել են հիմնանորոգման գործընթացի հերթական փուլում նախատեսված աշխատանքների ուղղություններն ու մոտեցումները:

Կոտայքի մարզպետը շրջայց է կատարել առողջապահական հաստատության մասնաշենքում, գրուցել բժշկական կենտրոնի և շինարարությունն իրականացնող կազմակերպության պատասխանատուների հետ՝ համապատասխան հանձնարարականներում ընդգծելով որակյալ աշխատանքներ կազմակերպելու կարևորությունները:

Աշխատանքային այցելության ընթացքում Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը բժշկական կենտրոնի ղեկավարության հետ քննարկել է նաև կազմակերպության գործունեության արդիականացմանն ու տեխնիկական հագեցվածությանը վերաբերող հարցեր և նշել, որ պոլիկլինիկայի մասնաշենքի պայմանների բարելավման արդյունքում պետք է ապահովվի ազգաբնակչությանը որակյալ բուժօժանայությունների մատուցումը: